

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26.12.2016թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի 2015-2016թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը:

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին:

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

3. ԵՊՀ ԻՄ-ի 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին:

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

4. ԵՊՀ ԻՄ-ի 2011-2016թթ.-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների մասին:

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

5. Ընթացիկ հարցեր

- 5.1 «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնադրությունը նոր խմբագրմամբ հաստատելու մասին:
- 5.2 «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը նոր խմբագրմամբ հաստատելու մասին:
- 5.3 ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման եվ մշակութաբանության ամբիոնի դոցենտ Ա. Պոտոսյանի «Զբոսաշրջության հիմունքներ» ձեռնարկը որպես դասագիրք հրատարակության երաշխավորելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին –«ԵՊՀ ԻՄ-ի` 2015-2016 ուստարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: (Տես հավելված 1):

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը: Նրանք կարևորեցին 2015-2016 ուստարվա ընթացքում Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքները, մասնավորապես շեշտեցին ԵՊՀ ԻՄ-ում կրթության որակի ապահովման, ինչպես նաև

դիմորդների քանակի ավելացմանն ուղղված ջանքերը: Նրանք առաջարկեցին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2015-2016 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Որոշեցին

Որոշում N 20/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ 2015-2016 ուստարվա ընթացքում Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:
2. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրով 2015-2016 ուստարում նախատեսված գործողությունների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:
3. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2015-2016 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի՝ 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցի կապակցությամբ Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա հանգամանալից ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի հունվար-դեկտեմբեր կատարողականը /Հավելված 2/:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանը, ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը: Նրանք արդյունավետ համարեցին կատարված աշխատանքները, կարևորեցին տվյալ իրավիճակում մուհի բյուջեի օպտիմալ կազմումը և իրականացումը, գնահատելով կատարված աշխատանքները լավ:

Որոշեցին

Որոշում N 20/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2016 թվականի (հունվար-նոյեմբեր) եկամուտների և ծախսերի վերաբերյալ գործունեության տնօրենի հաշվետվությունը:
2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2015 թվականի եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատումը կատարել հաշվեքննության արդյունքների հիման վրա և ներկայացնել հաստատման:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի՝ 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվի (բյուջեն) մասին» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ուրաքանչյուր տարվա ավարտին մասնաճյուղը գնահատում է իր ֆինանսական և նյութական ռեսուրսների

օգտագործման արդյունավետությունը, կատարում վերլուծություններ և դրանց հիման վրա պլանավորում հաջորդ տարվա իր ֆինանսական գործունեությունը, որը նպատակ ունի խնայողությունների հաշվին բարելավել ուսումնական գործընթացները, բարձրացնել աշխատակիցների աշխատավարձը, ավելացնել և զարգացնել նյութատեխնիկական բազան: Նա հանգամանավից ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագիծը /Հավելված 3/:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանը, ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը: Ելույթ ունեցողները կարևորեցին ԵՊՀ ԻՄ-ի բյուջեի օպտիմալ պլանավորումը և հավանություն տվեցին ներկայացված նախագծի:

Որոշեցին

Որոշում N 20/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 11-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2016 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը համաձայն հավելված 3-ի:
2. Հանձնարարել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենին 2016 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը ներկայացնել Երևանի պետական համալսարան հաստատման:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի 2011-2016թթ.-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների մասին» տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ սույն վերլուծական ուսումնասիրության նպատակը Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության առանցքային ցուցանիշների /ԳԱՑ/ սահմանված լրակազմի օգնությամբ: Ներկայացված են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների առանցքային ցուցանիշները վերջին հինգ տարիների համար: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Սույն վերլուծությունը նաև կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը: Այն կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացի շրջանակներում 2015/2016 ուստարում՝ ԵՊՀ ԻՄ-ի համապատասխան կառույցների մասնակցությամբ: Վերլուծությունը ամբողջությամբ տես հավելված 4-ում:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը: Ելույթ ունեցողները հավանություն տվեցին կատարված վերլուծությանը և առաջարկեցին ԵՊՀ ԻՄ –ի 2011-2016թթ ԳԱՑ-ը հրապարակայնացնել և տպագիր տեսքով տրամադրել բոլոր ստորաբաժանումներին:

Որոշեցին

Որոշում N 20/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Ընդունել ի գիտություն 2011-2016թթ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ԳԱՑ-ը:
2. Ապահովել ԵՊՀ ԻՄ-ի 2011-2016թթ ԳԱՑ-ի հրապարատմը և հրապարակայնությունը:

Ընթացիկ հարցեր

Լսեցին- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնադրությունը նոր խմբագրմամբ հաստատելու մասին :

Որոշեցին

Որոշում 20/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լսեցին – «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը նոր խմբագրմամբ հաստատելու մասին:

Որոշեցին

Որոշում 20/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 6-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման եվ մշակութաբանության ամբիոնի դոցենտ Ա. Պոտոսյանի «Զբոսաշրջության հիմունքներ» ձեռնարկը որպես դասագիրք հրատարակության երաշխավորելու մասին ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման եվ մշակութաբանության ամբիոնը դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին ամբիոնի դոցենտ Ա. Պոտոսյանի «Զբոսաշրջության

հիմունքներ» ձեռնարկը որպես դասագիրք հրատարակության երաշխավորելու համար:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման եվ մշակութաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Գ. Հովհաննիսյանը, ամբիոնի դոցենտ Վ. Գրիգորյանը, ՄԿԾ-ի պատասխանատու Պ. Ասիլբեկյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ աշխատանքը համապատասխանում է «Սերվիս» մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված «Զբոսաշրջության հիմունքներ» առարկայի ծրագրային պահանջներին և վերջինիս հրատարակումը կլրացնի մայրենի լեզվով մասնագիտական գրականության պակասը:

Դասագիրքը կարող է օգտակար լինել տնտեսագիտական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, ինչպես նաև տուրիզմի հարցերով զբաղվող լայն շրջանակների համար:

Որոշեցին

Որոշում 20/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Երաշխավորել հրատարակության ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման եվ մշակութաբանության ամբիոնի դոցենտ Ա. Պոտոսյանի «Զբոսաշրջության հիմունքներ» ձեռնարկը որպես դասագիրք:

Նիստի ավարտին անբասիր աշխատանքի համար ԵՊՀ-ի հուշամեդալով պարգևատրվեցին Անձնակազմի կառավարման բաժնի վարիչ, իրավախորհրդատու Ալբերտ Հովհաննիսյանը ու Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, «Սերվիս» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Պավել Ասիլբեկյանը: Հուշամեդալները հանձնելուց հետո ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը շնորհավորեց բոլորի Ամանորը և Սուրբ Ծնունդը՝ նրանց ընտանիքներին մաղթելով խաղաղություն, բարօրություն, երջանկություն, հաջողություն և ամենայն բարիք:

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար _____ Մ.Ս. ԱԹՈՅԱՆ